

Ց Ա Ն Կ

ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

I. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐ

1. Կուրություն
2. Խլություն
3. Համրություն

II. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Հոգեկան և վարքային խանգարումներ (F00-F16, F18, F19-F39, F60-F61, F44.1, F44.2, F44.3, F44.6, F44.8, F63, F70-F89):

5. Կենտրոնական նյարդային համակարգի քրոնիկ պրոգրեսիվող հիվանդություններ՝ արյան շրջանառության սուր և քրոնիկ խանգարումներով, տետրապլեգիայով, արտահայտված թուլամտությամբ, կոնքի օրգանների ֆունկցիայի խանգարումներով (G30, I60-I69):

6. Կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզ՝ շարժողական ֆունկցիայի խանգարումով (G35):

7. Էպիլեպսիա՝ հաճախակի նոպաների և անձի արտահայտված փոփոխությունների առկայությամբ (G40):

8. Միասթենիա(G70.0):

9. Միոպաթիա (G71.2-G72):

10. Նյարդային համակարգի բնածին (զարգացման) արատներ (Q00-Q07):

11. Զարկերակային գերճնշում բարդացված նյարդային կենտրոնական համակարգի, սրտամկանի, ակնահատակի, երիկամների ախտահարումով, խիստ արտահայտված ֆունկցիաների խանգարումով, դեկոմպենսացված փուլում (I10):

12. Սրտային անբավարարություն՝ դիստրոֆիկ փուլում, բարդացված ասցիտով, անասարկայով (I50):

13. Շաքարային դիաբետ՝ դեկոմպենսացված փուլում, երիկամների ախտահարումով՝ ծանր ձևի դիաբետիկ նեֆրոպաթիա երիկամային անբավարարություն (E10-E14† N08.3):

14. Չարորակ նորագոյացություններ 4-րդ փուլում՝ մետաստատիկ քայքայումով (C00):

15. Արյան չարորակ հիվանդություններ՝ 4-րդ փուլում, բուժման ոչ ենթակա ձևերով (C97):

16. Շնչառական օրգանների տուբերկույրով՝ հաստատված մանրէաբանորեն կամ հյուսվածքաբանորեն (A15):

17. Երիկամների քրոնիկական հիվանդություններ կամ այլ հիվանդությունների հետևանքով արտահայտված երիկամային ախտահարումներ՝ բարդացված քրոնիկ երիկամային անբավարարությամբ, տերմինալ փուլում (N18):

18. Ականջի հիվանդություններ՝ արտահայտվածությամբ (H90):

19. Տեսողական խանգարումներ՝ անարտահայտչականությամբ (H54.0):

20. Վեստիբուլյար (նախադոնային) ֆունկցիայի խանգարում (H81):

21. Խոսքի զարգացման յուրահատուկ խանգարումներ (F80):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

_____ (արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության անվանումը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Տրվում է քաղաքացի

(անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

2. Հաշվառման վայրը

3. Բնակության վայրը

4. Կատարված հետազոտությունները (թվարկել) և դրանց արդյունքները

5. Տվյալ պաշտոնում նշանակվելու պիտանիության վերաբերյալ բժշկական եզրակացությունը

Բժշկական կազմակերպության տնօրեն՝

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը, հայրանունը)

_____ 20 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՏԵՂԵԿԱՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձի (այսուհետ՝ հավակնորդ) դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանքի (այսուհետ՝ տեղեկանք) տրամադրումն իրականացնում են՝

1) քաղաքային բնակչության համար՝ այն արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները (այսուհետ՝ արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություն), որտեղ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշմամբ սահմանված կարգով գրանցված է հավակնորդը:

2) գյուղական բնակչության համար՝ այն արտահիվանդանոցային բժշկական կազմակերպությունները, որտեղ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի N 47-Ն հրամանով հաստատված չափորոշիչով սահմանված կարգով իրականացվում են տվյալ տարածաշրջանի գյուղական բնակավայրերի բնակչության նեղ մասնագիտական խորհրդատվությունները և լաբորատոր-գործիքային ակտորոշիչ հետազոտությունները:

2. Այն դեպքում, երբ արտահիվանդանոցային բժշկական կազմակերպությունը չի իրականացնում հոգեբուժական և թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում, հավակնորդն արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություն է ներկայացնում տվյալ տարածքն սպասարկող հոգեբուժական և թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից տրված բժշկական փաստաթղթերը:

3. Հավակնորդն արտահիվանդանոցային բժշկական կազմակերպությունում բժշկական ստուգում անցնելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ, իսկ սույն կարգի 2-րդ կետով սահմանված դեպքում՝ նաև հոգեբուժական և թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից տրված բժշկական փաստաթուղթը:

4. Հավակնորդին տեղեկանք տրամադրելու նպատակով արտահիվանդանոցային և հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տնօրենի հրամանով ստեղծվում է մշտապես գործող բժշկական հանձնաժողով:

5. Արտահիվանդանոցային բժշկական կազմակերպության մշտապես գործող բժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ բժշկական հանձնաժողով) կազմում ընդգրկվում են թերապևտը կամ ընտանեկան բժիշկը, նյարդաբանը, սրտաբանը, քիթ-կոկորդ-ականջաբանը, ակնաբույժը, ուռուցքաբանը (առկայության դեպքում), ներգատաբանը, հոգեբույժը (առկայության դեպքում): Առանձին դեպքերում, ելնելով կոնկրետ հիվանդությունից կամ վիճակից, բժշկական հանձնաժողովը, արտահիվանդանոցային բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով, կարող է համալրվել նաև տվյալ բժշկական կազմակերպության այլ բժիշկ-մասնագետներով:

6. Հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տնօրենը սույն կարգի 2-րդ կետով սահմանված բժշկական փաստաթուղթը հավակնորդին է տրամադրում դիմելու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ արտահիվանդանոցային պայմաններում հնարավոր չէ գալ եզրահանգման հոգեկան հիվանդությունների առկայության կամ բացակայության վերաբերյալ, ապա իրականացվում է հետազոտում «ցերեկային ստացիոնար» կամ «ստացիոնար» պայմաններում: Հետազոտության արդյունքների հիման վրա հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տնօրենը սույն կարգի 2-րդ կետով սահմանված բժշկական փաստաթուղթը հավակնորդին է տրամադրում դիմելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տնօրենը սույն կարգի 2-րդ կետով սահմանված բժշկական փաստաթուղթը հավակնորդին է տրամադրում ոչ հանձնաժողովային կարգով, համապատասխան հետազոտությունների արդյունքների հիման վրա՝ դիմելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Արտահիվանդանոցային բժշկական կազմակերպության տնօրենը սույն կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հավակնորդին է տրամադրում տեղեկանքը՝ հիմք ընդունելով բժշկական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը, իսկ սույն կարգի 2-րդ կետով սահմանված դեպքում՝ նաև հոգեբուժական և թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից տրված բժշկական փաստաթուղթը:

9. Բժշկական ստուգման արդյունքում բժշկական հանձնաժողովի կողմից տրված եզրակացության վերաբերյալ տվյալները գրանցվում են ամբուլատոր բժշկական քարտում և վավերացվում հանձնաժողովի անդամների ստորագրություններով:

10. Տեղեկանքը վավեր է տալու պահից մեկ ամիս ժամկետով:

11. Տեղեկանքը կորցնելու կամ օգտագործման համար ոչ պիտանի դատնալու դեպքում հավակնորդը դիմում է արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություն՝ տեղեկանքի կրկնօրինակն ստանալու համար:

12. Տեղեկանքի կրկնօրինակը հավակնորդին տրամադրվում է սկզբնական փաստաթուղթում ամրագրված ժամկետով, դիմելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, տեղեկանքի կրկնօրինակի վերևի աջ անկյունում նշելով «Կրկնօրինակ» բառը, որի վրա դրվում է արտահիվանդանոցային բժշկական կազմակերպության կնիքը (առկայության դեպքում):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ